



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք,
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 6-րդ փող. 1,
Հեռ. 098-910-932 , qaxsi.kotayk@mail.ru

N 031-211
30 հունիս 2020թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան,

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի
4-րդ մասի 9-րդ կետի, Ձեզ է ուղարկվում Քաղսի համայնքի ավագանու 2020թ
հունիսի 26-ի թիվ 5 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ռաֆայել Գրիգորյան

Կոպ.՝ 1 հազարըլլան

091846746



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 19

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ 5-ՐԴ
ԱՐՏԱԿԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին *որոշում է՝*

Հաստատել Քաղսի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 26-ի թիվ 5-րդ արտահերթ նիստի օրակարգը՝

1. Հողային նպատակային նշանակությունը փոխելու մասին
2. Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը օտարելու մասին
3. Քաղսի համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 15-ի N18 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Կողմ - 4

Դեմ - 0

Չեղնապահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅԸ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵՂԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

(Handwritten signatures of the council members)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 20

ՀՈՂԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» N1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 17-ի դրական եզրակացությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Քաղսի համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու՝ Արթուր Գևորգյանի սեփականություն հանդիսացող 0.80 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքից 0.09666 հա մակերեսով հողամասը/ կադաստրային / ծածկագիր՝ 07-063-0087-0049-ից /փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, բնակելի կառուցապատման, ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու նպատակով:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է քան մինչև փոփոխումը:

Կողմ -4

Դեմ - 0

Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅԸ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵՂԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՆԱՄԱՅՆԻՔԻ ՂԵՎԱՎԱՐ



ԴԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 21

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի 07-063-0303-0004 ծածկագրի 0,03325 հա հողամասը օտարել աճուրդով մեկնարկային գինը սահմանել 349 125 (երեք հարյուր քառասուն ինը հազար հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, կադաստրային արժեքի 1000%-ի չափով, քայլի չափը 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

Կողմ -4

Դեմ -0

Չեղնակալ -0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅԸ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵԴԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌԱՅԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 22

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N18
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Քաղսի համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 15-ի « Քաղսի համայնքի համայնքապետարանի համար նոր ծառայողական ավտոմեքենայի ձեռքբերման մասին » N18 որոշումն ուժի կորցրած ճանաչել:

Կողմ -4

Դեմ -0

Չեղնակալի -0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵՂԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱ



ՈԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ